ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 07/20/1675-2026

«09 03»..... 2026թ.

«ՌԱԲԲԵՐ ԸՆԴ ՀԱՅՎԵՅ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ԱՂԱՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ
(agasivahe@gmail.com)

Հարգելի՛ պարոն Վարդանյան,

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «ՌԱԲԲԵՐ ԸՆԴ ՀԱՅՎԵՅ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00916043) միջև 2023 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված N «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-23/03» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել **«Փորձակոնստրուկտորական»** աշխատանքներ»՝ (այսուհետ՝ Աշխատանք) համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածով ներկայացված գնման ժամանակացույց-տեխնիկական բնութագրի:

Համաձայն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույց-տեխնիկական բնութագրի՝ մինչև 30.08.2024թ. Կատարողի կողմից պետք է հանձնվեին առաջին փուլի (Չի ընդունվել Պատվիրատուի կողմից), մինչև 30.03.2025թ. երկրորդ փուլի, իսկ մինչև 30.06.2025թ.՝ երրորդ փուլի արդյունքները, որոնք մինչ օրս կատարված չեն (աշխատանքները՝ այդ թվում փուլային, պատվիրատուին չեն հանձնվել):

Համաձայն Պայմանագրի 6.2 կետի՝ Կողմերից որևէ մեկի միակողմանի հրաժարման դեպքում մեղավոր կողմը փոխհատուցում է մյուս կողմի բոլոր վնասները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նույն Պայմանագրի 6.6 կետի համաձայն՝ կատարողը պատվիրատուի առջև պատասխանատվություն է կրում փորձակոնստրուկտորական աշխատանքների

կատարման պայմանագրի խախտման համար, եթե չի ապացուցում, որ նման խախտումն առաջացել է իր մեղքից անկախ հանգամանքների հետևանքով և սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը չկատարելու դեպքում վերադարձնում է պատվիրատուի կողմից տրված կանխավճարը և առանձին փուլերով կատարված աշխատանքների դիմաց վճարված գումարը, ինչպես նաև վճարում է տուգանք պայմանագրի գնի 0,5 %-ի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, հիմք ընդունելով 2023 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված N «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-23/03» գնման պայմանագրի 2.1.5 կետի ա) և բ) ենթակետերը **2026 թվականի մարտի 09-ից միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:**

Տեղեկացնում ենք, որ «ՌԱԲԲԵՐ ԸՆԴ ՀԱՅՎԵՅ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 10 (տասը) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «900005570115» հաշվեհամարին վերադարձնել (վճարել) տրամադրված կանխավճարը՝ 117,000,000 (մեկ հարյուր տասնյոթ միլիոն) ՀՀ դրամ գումարը, տուգանքը՝ պայմանագրի գնի 0,5 %-ի չափով՝ 1,960,770 (մեկ միլիոն ինը հարյուր վաթսուն հազար յոթ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ գումարը, նույն ժամկետներում վճարել գանձապետական «900005028106» հաշվեհամարին, իսկ Պայմանագրով նախատեսված տույժերը՝ 33,965,832 (երեսուներեք միլիոն ինը հարյուր վաթսունհինգ հազար ութ հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ գումարի չափով՝ վճարել գանձապետական «900005028106» հաշվեհամարին:

Պայմանագրով նախատեսված տույժերի չափերն են.

1-ին փուլ՝ 30.08.2024թ.-07.01.2025թ. ընկած ժամանակահատվածի համար, որը կազմում է 90 աշխատանքային օր: Տույժի հաշվարկը կազմել է 3,770,237 (երեք միլիոն յոթ հարյուր յոթանասուն հազար երկու հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ (83,783,047 x 0.05% x 90),

2-րդ փուլ՝ 30.03.2025թ.-09.03.2026թ. ընկած ժամանակահատվածի համար, որը կազմում է 235 աշխատանքային օր: Տույժի հաշվարկը կազմել է 24,105,595 (քսանչորս միլիոն հարյուր հինգ հազար հինգ հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ (205,154,000 x 0.05% x 235),

3-րդ փուլ՝ 30.06.2025թ.-09.03.2026թ. ընկած ժամանակահատվածի համար, որը կազմում է 174 աշխատանքային օր: Տույժի հաշվարկը կազմել է 6,090,000 (վեց միլիոն իննսուն հազար) ՀՀ դրամ (70,000,000 x 0.05% x 174):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կհրապարակվի www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

09.03.2026

X

ԴԱՎԻԹ
ԳԱՍՊԱՐՅԱՆ
Signed by: GASPARYAN DAVIT 1407810154

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ * 11 ԲԱՐՁՐԱՅԱՆ ԴԻՄԱՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Կատ.՝ Գնումների բաժնի պետ
Արթուր Բաղդասարյան
Հեռ.՝ 010 59 00 47